

Ս. Վ. ԳՅՈՒԼՔՈՒԿԱՆ, Ժամանակակից հայերենի շարահյուսություն.

Երևանի համալսարանի հրատ., 1988, 290 էջ:

Հայերենի շարահյուսության բնագավառում լուրջ առաջընթաց է նկատվում, և շարահյուսության հարցերը ևս պատշաճ ուշադրության են արժանանում:

Հրատարակվել են մի շարք ուսումնասիրություններ, դասագրքեր՝ նվիրված ժամանակակից հայերենի շարահյուսությանը, նրա առանձին իրողություններին:

Բոլորովին վերջերս լույս տեսավ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Գուլբերդյանի «Ժամանակակից հայերենի շարահյուսություն» գիրքը, որը նախատեսված է որպես ուսումնական ձեռնարկ բանասիրական ֆակուլտետների երեկոյան և հեռակա բաժինների ուսանողների համար:

Անշուշտ, յուրաքանչյուր լեզվի շարահյուսական համակարգում կարևոր դեր է պատկանում պարզ նախադասության շարահյուսությանը, քանի որ անհնար է պատկերացնել լեզվի շարահյուսական կառուցվածքի նկարագրությունը՝ առանց նրա էական մասը կազմող պարզ նախադասության շարահյուսության:

Պրոֆ. Ս. Գուլբերդյանի սույն ձեռնարկը նվիրված է ժամանակակից հայերենի պարզ նախադասության համակողմանի ընկալմանը: Հեղինակը հանգամանորեն ու գիտական խորությամբ լուսաբանել է պարզ նախադասության շարահյուսության հետ առնչվող գրեթե բոլոր հարցերը և, ելնելով ձեռնարկի խնդիրներից ու նպատակներից, իրավացիորեն խուսափել է ավելորդ մանրամասնություններից ու բանավիճալի բնույթ կրող հարցադրումներից:

Ինչ խոսք, ամեն մի ձեռնարկի համար գիտականությունը առաջնային և կարևոր պայման է, սակայն ուսանողության համար կազմելով ձեռնարկում միայն այդ պայմանը քիչ է: Ի պատիվ հեղինակի պիտի ասել, որ նա ոչ միայն ապահովել է ձեռնարկի գիտականությունը, ըննարկվող հարցերը լուսաբանել է լեզվաբանական գիտության ժամանակակից մակարդակով, այլև հաջվի է առել նման ձեռնարկին ներկայացվող ամենակարևոր պահանջը՝ մեթոդա-մանկավարժական ուղղման ուսումնական համապատասխանությունը բուհական ծրագրի պահանջներին:

Ելնելով շարահյուսագիտության արդի նշվածումներից՝ հեղինակը ներկայացնում է պարզ նախադասության հետ առնչվող մի շարք իր-

ողություններ՝ իայերենին հատուկ շարահյուսական կապակցության եղանակները, բնութիւն ու միջոցները, շարահասությունը, պարզ նախադասության անդամների զեղչումը և բազմաթիվ այլ հարցեր: Մի ընդարձակ հատված նվիրված է բառակապակցությունների ընկալմանը: Առանց այդ հարցերի ըննարկման ձեռնարկը, անշուշտ, թերի կլիներ, և ծիշտ է վարվում հեղինակը՝ կարևորելով շարահյուսական միավորների կապակցման միջոցների ու եղանակների դերը պարզ նախադասության կառուցվածքի մեջ:

Կապակցված խոսքում նախադասության անդամների միջև գոյանում են քերականական տարբեր հարաբերություններ՝ ստորադասական (լրացում-լրացյալի) և համադասական (հավասար անդամների): Կապակցման այս եղանակներին հեղինակն ամելացնում է նաև ստորոգումային հարաբերությունը, որով կապակցվում են ենթական ու ստորոգյալը և ըստ կապակցության բնույթի ընդունում ենթակայական, ստորոգելիական, որոշային, խնորային և պարզայական կապակցություններ:

Ուսանողության համար կազմված ձեռնարկում, ինչ խոսք, պետք է տեղ գտնեն տվյալ բնագամառի գիտության կոմմից համընդհանուր ձանաչում գտած ըմբռնումներն ու տեսակետները (սա, իհարկե, չի բացառում, որ հեղինակն այս կամ այն հարթի վերաբերյալ արտահայտի իր կարծիքներն ու տեսակետները): Ներկայացնելով քերականագիտության մեջ ընդունված կապակցության երեք եղանակները՝ կառավարում (խնդրառություն), աղբյուրություն և համաձայնություն՝ պրոֆ. Գուլբերդյանը հիմնավոր փաստարկումներով ցույց է տալիս, որ կառավարման համար հիմունք են ծառայում՝ ա) բառի քերականական իմաստը, բ) բառի բառային իմաստը, գ) բառի բազմիմաստությունը, նրբիմաստները և այլն: Ձեռնարկի հեղինակը վիճարկում է այն տեսակետը, ըստ որի կառավարման հիմունք է համարվում նաև խոսողի նպատակը: Միանգամայն ճիշտ է լեզվաբանի այն նկատումը, որ միևնույն լրացյալը կարող է ունենալ մեկից ավելի լրացումներ (Գիրքը փոստով ուղարկեցի ընկերոջս), բայց դա լրացյալի (տվյալ դեպքում՝ բայի) իմաստից է բխում: Եվ եթե խոսողը այդ կառույցներից մեկն է գործածում, դա դեռ չի նշանակում, թե

խոսողի նպատակը դառնում է կառավարման հիմունք (էջ 21):

Գրախոսվող ձեռնարկում պատշաճ տեղ է հատկացված նախադասության տեսությանը, նրա քերականական հատկանիշների, եղանակավորության, դրսևորման միջոցների (հնչերանգ, շարահաստություն), ստորոգման, պարզ նախադասության կառուցվածքի քննությանը: Հստակորեն համակարգված են նախադասության տեսակներն ըստ հնչերանգի, ըստ իրականության հետ ունեցած հարաբերության, ըստ կազմության և ըստ գլխավոր անդամների մասնակցության:

Հանգամանորեն ներկայացված են միակազմ (անդեմ և անենթակա) նախադասությունները՝ իրենց ենթատեսակներով: Դիմավոր միակազմ (անենթակա) նախադասությունների մեջ առանձնացվում են վիճակային (բուն լանենթակա), անորոշ դիմավոր և ընդհանրական միակազմ նախադասությունները՝ բայական և անվանական ենթատեսակներով: Վերջիններիս մեջ են մտցվում նաև հաստատում, ժխտում, արհամարհանք արտահայտող բառ-նախադասությունները:

Համառոտակի ներկայացնելով նախադասության անդամների տեսության ժամանակակից ըմբռնումները՝ պրոֆ. Գյուլբուդադյանը ձիշտ մոտեցում է ցուցաբերում այդ հարցում:

Ինչպես հայտնի է, վերջին տարիներին որոշ քերականագետներ մերժում են նախադասության երկրորդական անդամների ուսմունքը: Ըստ այդ տեսակետի նախադասության մեջ պետք է առանձնացվեն միայն գլխավոր անդամները՝ ենթական ու ստորոգյալը, իսկ երկրորդական անդամները նրանց հավասար մակարդակի միավորներն են: Այդ տեսակետն իր արտահայտությունն է գտել ռուսերենի ակադեմիական թերակառուցության մեջ (1970): Գ. Ա. Զոլոտովան նույնպես նախադասության անդամը չի համարում կառուցվածքային միավոր:

Մեր կարծիքով ձիշտ է վարվում ձեռնարկի հեղինակը, որ չի հետևում այս նորաթույն տեսություններին. քանի որ նման մոտեցման դեպքում փաստորեն ժխտվում է նախադասության անդամը որպես շարահյուսական մակարդակի միավոր: Պրոֆ. Գյուլբուդադյանն իրավագիտորեն ընդունում է ամառական քերականագիտության մեջ եռամ ան տեսակետը. ուստ որի նախադասության ստորոգումային միավորներ են ենթական ու ստորոգյալը, քանի որ նազմում են նախադասության միջուկը, իսկ մնացած անդամները դիտվում են որպես երկրորդական անդամներ կամ լրացումներ: Պարզ նախադասության շարահյուսական կառուցի մեջ կան նաև այլ կարգի բառեր ու բառակապակցություններ էլ, որոնք ավանդական ըմբռնումով նախադասության անդամ չեն համարվում, քանի որ քերականական կապի մեջ չեն նախադասության մյուս անդամների հետ: Ձեռնարկի հեղինակը չի ջրբանցել նախադասության մեջ

մտնող այդ միավորները՝ կոչականը, ծայնարկությունը, միջանկյալ ու ներդրյալ բառերն ու բառակապակցությունները, որոնք կարևոր դեր ունեն նախադասության ձևավորման և հաղորդվող մտքի զանազան նրբերանգներ դրսևորելու գործում:

Նախադասության բովանդակային պլանի հետ կապված այդ արտահայտությունները պրոֆ. Գյուլբուդադյանն անվանում է նախադասության հարակից միավորներ և առանձին-առանձին քննում է կոչականը, նրա արտահայտության միջոցները, միջանկյալ ու ներդրյալ բառերն ու բառակապակցությունները:

Գրքում ըստ տեսակների ներկայացված են նախադասության երկրորդական անդամները, նրանց արտահայտությունը, տվյալ անդամի խոսքիմասային պատկանելությամբ պայմանավորված կիրառական յուրահատկությունները, շարահաստությունը և այլ հարցեր:

Ըստ լրացյալի խոսքիմասային պատկանելության տարբերված են երկու կարգի լրացումներ՝ 1. գոյականական անդամի լրացումներ (որոշիչ, հատկացուցիչ) և 2. բայական անդամի լրացումներ (խնդիրներ և պարագաներ):

Հեղինակը, բացահայտիչ-բացահայտյալը համարելով մի առանձնահատուկ կառուց, առանձնագում է անվանական լրացումների համակարգից և, կարծում էնք, ձիշտ է վարվում, որովհետև բացահայտյալի դերում կարող են հանդես գալ ոչ միայն գոյականները, այլև ածականները, դերբայական ձևերը և այլ խոսքի մասեր:

Ձեռնարկի հեղինակը լրացումների ամբողջական համակարգը բաժանում է գոյականական անդամի լրացումների և բայական անդամի լրացումների: Նման դասակարգումն ավելի ճշգրիտ է, քան երկրորդական անդամների ավանդական դասակարգումը ենթակալի և ստորոգյալի լրացումների, քանի որ, ինչպես նկատում է Գյուլբուդադյանը, շարահյուսական կառուցում լրացյալը լրացում է ընդունում ոչ թե իր ունեցած գործառույթով, այլ քերականական հմաստով ու խոսքիմասային պատկանելությամբ: Հասկանալի է, որ ուսանողության համար կազմված նման մի ձեռնարկում հանգամանորեն պետք է ներկայացվեին նախադասության երկրորդական անդամները՝ իրենց որոշակիորեն բազմաօսան ձևերով, ինչո և կատարել է հեղինակը՝ սիտական բարեխոհությամբ՝ սրանձին ռեաերում արտահայտելով իր մտտությունն ու կարծիքները այս կամ անոսամի ոմեռնման հանգում: Աստես օրինակ՝ աղոծ. Գյուլբուդադյանն սիճանում է մասնունան բառահատուկ: Ըստ նոս կարծիքի որպես. իսկ ինչպես կապերով կապակցությունը բացահայտիչ չէ, այլ հիմունքի պարագա: Բերելով պրոֆ. Գ. Անակի շարահյուսության դասագրքի «Արմիկը, որպես դասարանի լավագույն աշակերտուհի, պարզատրվեց» և «Արմիկը՝ դասարանի լավ

վագույն աշակերտուհին, պարզևատրվեց» օրինակները՝ հեղինակը եզրակացնում է, որ առաջին օրինակում ընդգծված կապակցությունը հիմունքի պարագա է, քանի որ ցույց է տալիս, թե ինչի հիման վրա են պարզևատրել Արմինին:

Այս բացատրությունը մեր կարծիքով վիճելի է, քանի որ նման կապակցությունները միշտ չէ, որ բացահայտիչ են դիտվում: Պրոֆ. Գյուլբուրդյանին ինքն էլ նկատում է, որ դրանք հաճախ ունենում են ձևի պարագայի գործառույթ (էջ 171): Մասնակալ բացահայտիչ պիտի համարել հիշյալ կապերով միայն այն կապակցությունները, որոնք ենթարկվում են փոխակերպման: Ձեռնարկում որպես մասնակալ բացահայտիչ համարված օրինակների զգալի մասը ձևի պարագա է: Այսպես՝ Նստել էր իվան բեյը իր սեղանի առջև, որպես լոնջ շարժված թռչուն (էջ 169): Այդ խոսակցությունը կմնա մեր մեջ որպես նուրբ զարդանք: Սպիտակ աղավինները, ինչպես ծյան սպիտակ քույր, սավառնում են օդում: Այլ օրինակներում մասնակալ բացահայտիչի մասին խոսք անգամ լինել չի կարող. դրանք ձևի պարագաներ են: Բսկ «Որպես յեմպինո նա հոչակվեռ 1979 թվականին» նախադասության մեջ ընդգծված կապակցությունը պետք է դիտել որպես բաղադրյալ ստորոգյալի մաս: Պա ոչ բացահայտիչ է և ոչ էլ ձևի պարագա:

Բայական անդամի լրացումներից խնդիրները ներկայացված են ոչ թե ուղիղ և անուղղակի խնդիրներ համակարգումով, այլ սեռի խնդիրներ (ուղիղ և ներգործող) և բնության խնդիրներ:

Առանձին հարվածով տրված են նախադասության համադաս (բազմակի) անդամները, նրանց կառուցվածքային առանձնահատկությունները, կապակցությունը, շարահասությունը: Մեր կարծիքով միշտ է վարվում հեղինակը՝ բազմակի ենթակայներով նախադասությունը դիտելով որպես պարզ նախադասություն, իսկ բազմակի ստորոգյալներով՝ բարդ:

Նախադասության շարահյուսական կառուցվածքի մեջ առանձնահատուկ տեղ ունեն տրոհվող լրացումները: Սույն ձեռնարկում հանգամանորեն ներկայացված են ոչ միայն տրոհմանը նպաստող գործոնները, այլև տրոհվող լրացումները՝ իրենց տեսակներով ու տրոհման լուրահատկություններով:

Ձեռնարկում տեղադրված են շուրջ երեք տասնյակի հասնող գծապատկերներ, որոնք անչափ կարևոր են ուսուցման համար և կարող են օգտագործվել պարզ նախադասության շարահյուսության գործնական պարագմունքների ժամանակ:

Ձեռնարկը թերություններից զերծ տեսնելու բարի ցանկությամբ ուզում ենք հեղինակի ուշադրությունը հրավիրել մեր կարծիքով վիճելի թվագող մի քանի հարցերի մրա.

Հայտնի է, որ կապակցությունը շարահյուսական կարգ է և վերաբերում է շարահյուսու-

թյանը: Բայց ձեռնարկի 26-րդ էջում կարողում ենք, որ առդրության եղանակով կապակցվում են չթեքվող խոսքի մասերը՝ ածական անունը (բարձրահարկ շենք, կարմիր կտոր), թվական անունը (հինգ գիրք, հինգերորդ դասարան), մակբայը (արագ ընթանալ, վաղուց երագել), ենթակայական դերբայը (նամակ գրող երեխա), հարակատար դերբայը (նստած մարդը), դերանունները և այլն: Բերված կապակցությունները, ի բաց առյալ մակբայականը, որոշիչներ են, ուստի ճիշտ կլիներ ասել, որ առդրական կապակցությամբ որոշիչն է կապվում որոշյալին և ոչ թե չթեքվող խոսքի մասերը:

Այնուհետև, դասելով հեղինակի մոտեցումից՝ կոչականը, միջանկյալ ու ներդրյալ բառերը նախադասության անդամներ չեն: Դրանք իրավաբանորեն անվանվում են նախադասության հարակից միավորներ, որոնք քերականորեն չեն կապվում նախադասության անդամների հետ: Սակայն ձեռնարկի 27-րդ էջում կարողում ենք, որ առդրական եղանակով են կապակցվում նաև վերաբերական բառերը (զոնե բարի, կարծես տղան, երևի երեխան): Նախ՝ նման կապակցություններ հայտնենում չկան, քանի որ վերաբերական բառերը լրացական կապակցություններ չեն կազմում, երկրորդ՝ եթե վերաբերական բառերը նախադասության անդամ չեն դառնում, ուրեմն և խոսք չի կարող լինել նրանց կապակցության եղանակի մասին, մանավա՛ղ որ նրանցից շատերը հանդես են գալիս միջանկյալ բառերի դերում:

Մեր կարծիքով նման ձեռնարկում կարիք չկար այդպիսի մանրամասնությամբ ներկայացնելու որոշիչ և հատկացուցիչ իմաստային ներբերանգները: Պա կարող է շփոթության մեջ օգել սովորողներին: Այսպես, 158-րդ էջում կարողում ենք. «Ըրբեմն հատկացուցիչն ունենում է ուղիղ խնդրի իմաստ (զինու արտահանումը, հողի պարարտացումը): Այդ դեպքում կարող ենք ասել, որ հատկացուցիչը նաև պարագայի իմաստ ունի (ձմեռվա ցուրտ, գլխի օխարկ): Բայց չէ՛ որ սրանք սեռական հոլովի իմաստային առումներն են, որոնք վերացարկվում են հատկացուցիչ շարահյուսական անդամի մեջ:

Ձեռնարկում կան անհամոզիչ ու ոչ հստակ մեկնաբանություններ: 39-րդ էջում հեղինակը գրում է. «Պետք է տարբերել ձևաբանական եղանակ և շարահյուսական եղանակ: Գրում եմ-ը սահմանական եղանակի բայ է, գրեի՝ ըզձական, կգրեմ-ը ենթադրական, պիտի գրեմ-ը՝ Խարկադրական, գրի՛ր՝ հրամայական: Իսկ շարահյուսական եղանակը ձևաբանական կիրառությունն է, որը կարող է իմաստով չհամընկնել: Ձևաբանականին»: Եվ որպես օրինակ բերված է հետևյալ նախադասությունը. «Շուտով պառերազմը կվերջանա, և ես տուն կգնամ,— բացականչեց Արմենը»: Հեղինակի կարծիքով ընդգծված ենթադրական եղանակի բայաձևերը գործածված են սահմանականի իմաստով:

Անշուշտ, ճիշտ է այն միտքը, որ խոսքային կոնկրետ պայմաններում տվյալ եղանակային իմաստը կարող է չպահպանվել, այլ կերպ ասած՝ գործածվել այլ եղանակի իմաստով, քանի որ եղանակային ձևերը բացի իրենց հիմնական իմաստից, ոճական կիրառություններով պայմանավորված, ձեռք են բերում նաև կոնոտատիվ նշանակություններ, բայց դա չի նշանակում, թե դրանք դառնում են ինչ-որ շարահյուսական եղանակ: Իսկ վերևում բերված օրինակում ամենևին էլ սահմանական եղանակի իմաստ չկա, այն հենց ենթադրական եղանակ է իր նշանակությամբ: Նույն դիտողությունը վերաբերում է ժամանակի քերականական կարգին (էջ 64):

«Բառակապակցություն» բաժինը ծավալուն է ներկայացված: Նախադասության անդամները քննելիս բառակապակցական կաղապարները գրեթե նույնությամբ կրկնվում են:

Եվս մի նկատառում. հոլովների կիրառության մասին խոսելիս նկատվում է, որ ձեռնարկի հեղինակը հետևում է հինգ հոլովի տեսությանը: Բայց այդ դեպքում ինչպե՞ս հասկանալ, երբ 148—149-րդ էջերում նա գրում է. «Օայլերի ոհմակ, Թաղիկների փունջ, թռչունների երամ

կապակցություններում ընդգծված սեռական (ընդգծումը մերն է—Ա. Մ.) հոլովով բառերն ունեն հարաբերական ածականի իմաստ»: Կամ «Երբեմն դժվար է որոշել, թե սեռականով (») լրացումը որոշի՞չ է, թե պարագա»: Նման անհետևողականությունը ուսանողին թյուրիմացության մեջ չի՞ զգի:

Ձեռնարկում կան անձտություններ, վրիպումներ, որոնք պետք է ուղղվեն (տե՛ս էջեր 16, 36, 48, 50):

Ամփոփենք. պրոֆ. Ա. Գյուլբուրադյանի շարահյուսության սույն ձեռնարկը արժարժված հարցերի բազմազանությամբ, ընդգրկումով, մանկավարժական ու մեթոդական ուղղվածությամբ և մանավանդ մատչելի ու հստակ շարադրանքով օգտակար դասագիրք է: Նրանցից կարող են օգտվել ոչ միայն ուսանողները, այլև հայոց լեզվի ու գրականության ուսուցիչները: Օգտագործելով շարահյուսագիտության ժամանակակից նվաճումները՝ հեղինակն ստեղծել է իր ամբողջության մեջ հաջողված մի ձեռնարկ, որի կարիքը վաղուց ի վեր խիստ զգացվում էր:

Ա. Ա. ՄԱՐՈՒԹՅԱՆ